

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում՝

1) «Ժ» կետում «ներդրումային ընկերությունների» և «ներդրումային ընկերությանը» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» և «, ներդրումային ֆոնդի կառավարիչին, վճարահաշվարկային կազմակերպությանը» բառերով.

2) հոդվածը լրացնել «լգ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝
«լգ) ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար ապահովում է Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող անձանց կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության հասանելիությունը:»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել:

Հոդված 3. Օրենքի 5.1-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո: